

եւ կամ գմբեթ ու տակառ զերար կը փոխանակէին: Հայերը իրենց խորշաշենքով գտան եղանակը նաեւ մեծ միջոցներ գմբեթակապելու: Ուստի գմբեթաշենքը բիւզանդիոնի նուերը չէ — հոն Զ. դարուն կը գտնենք գմբեթաշենք — այլ Հայանտանի:

Ստրչեգովսկի հետազօտութեան ուղիղ ձամբան ցուցուցած է: Սակայն տակաւին ձամբուն պիզզըն ենք: Շատ մը հարցերու լուսաբանութեան համար հարկ է ճանչնալ քրիստոնէութիւնը կանխող ճարտարապետութիւնը հայ հողի վրայ, ինչպէս նաեւ հիւսիս-արեւելեան երանի ճարտարապետութիւնը: Առ այս՝ նախառորձեր անգամ կը պակսին: “Երանի թէ Ստրչեգովսկի կեանքի աշխատութիւնը վերջապէս դժունք ամէն կողմանէ այն ընդունելութիւնը, որուն լիով արժանի է. երանի թէ գեղարուեստագէտ շրջաններ հասկնային, որ Ստրչեգովսկիի մատնանշած ճամբով միայն կարելի է ճշմարտութեան համնիլ: Հայ պատմութեամբ զբաղողը ինք զինք երախտապարտ կը զդայ Վիեննայի անխոնջ վաստակաւորին հանդէպ եւ խոր համոզումով կ'ընդգրկէ անոր տեսութիւնները:”

Հ. ՍԱՀԱԿԻ ԿՈԴԵԱՆ



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՏԱԴՐԻԹԻՒՆՆԵՐ ՍԵՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՄԸՆԻ

Խօսելով Սայաթ-Նովայի երգերի միակ ձեռագիր մասին, հրատարակիչ Գ. Հախվերդեանն ասում է. “Թու լըուրէն խաղերուց յետոյ գալիս են Հայերէն ասածներն: Սրանք դիփ էլ գրած են վրաց բաւական վարժ նօտրդրով: Գրածն դժար կարդալու է. շատ բառերում պահասում են բաղաձայն, երբեմն ձայնաւոր տառերն. կէտադրութիւնն էլ մի հարցնէք, ու 1:

¹ Սայաթ-Նովայ, լուս գցած աշխատասիրութէնով գէտրդայ Ելսկերեան, Մասկեա, ի առջ. Վ. Լադիմրայ Գոտիե, 1852, էջ ԺԳ-ԺԳ:

Այնուհետեւ խօսելով իր հրատարակութեան հանգամանքների մասին, նա ասում է. թէ մտադիր էր ամէն խաղի տակ ցոյց տալ Թիֆլիսի բարբառի “Հասարակ յատկութիւններն”, բայց յետոյ “բովանդակեցի, ասում է. առանձին բացատրութենում՝ լսելով խրատուն սիրելի եւ յարգոյ բարեկամիս՝ գիտնական Սկրտչէ Էմին, որն իմ աւելի սիրու ինքնայօժար վիզ առաւ էս խաղերու Մոսկվա քաղաքում տպելու վրայ տեսչութիւն ունենալու¹:

Նկարագրելով Սայաթ-Նովայի երգերի ձեռագրի վիճակը, հրատարակիչն ասում է. “Դրաւթարնունի 73 քառահարավ թերթ. առաջից միջից ու վերջից պակասում են շատ թերթեր: Շատ բանեցնելուց ու ժամանակից թղթերու ավելացնելու եղուած ու ծխուած են² եւ խօսելով այն մասին, թէ ինչ կարգով են երգերն իրար յաջորդում, Գ. Հախվերդեանն ասում է. “Երեք պատուած, գջտած, մաշած թերթերու վրայ գրած են խաղերն ԽԲ, ԽԶ, Գ, Ը, ԼԹ, ԽԶ³, ԽՊՆ գրգի մէջ ԽԶ Երգի տակ հրատարակիչն այսպիսի ծածովութիւն է գրել. “Թերթն՝ որոյ վրայ գրած էր էս խաղն՝ պատուած էր եւ շատ տեղ էլ իսկի չէին ջոկում բառերն⁴:

Այս քաղուածներից հետեւում է որ.

1. Սայաթ-Նովայի երգերի ձեռագրի լաւ չէ պահուած, Հայերէն երգերից վեցը գրուած են “պատուած, գջտած, մաշած թերթերի վրայն (Հայերէն երգերի թիւը 46 է):

2. Հայերէն երգերը գրուած են վրացերէն տառերով եւ շատ բառերում պակասում են ձայնաւոր եւ բաղաձայն գրերն:

3. Գ. Հախվերդեանը չէ որ սրբագրել է իր հրատարակութիւնը, այլ մի ուրիշը — Մկրտիչ Էմին:

4. Ձեռագրի մէջ կիտադրութիւնը չափազանց վատ է եղած. “կէտադրութիւնն էլ մի հարցնէք, ասում է հրատարակիչը:

Այս դիտողութիւնները հաշուի առնելով գալիս ենք այն եղանակացութեան, որ Սայաթ-Նովայի երգերը հրատարակելու համար հրատարակիչը չի գիտած գոհացել ձեռագրի պարզ արտադրութեամբ, այլ ստիպուած է եղել բնագիր կազմելու, նախ՝ գրադարձելով վրացերէն տառերը:

¹ Կոյն դիրքը, էջ ԺԳ:

² Տես էջ ԺԳ:

³ Տես էջ ԺԳ. Պէտք է կարծել, որ ԽԲից յետոյ և կոյն ԽԶ տառասիրակ, ի առջ. Վ. Լադիմրայ Գոտիե, 1852, էջ ԺԳ-ԺԳ:

⁴ Տես էջ 172:

տառերը հայերէն գրութեան. յետոյ՝ իրենց տեղերը գնելով պակսող բաղաձայն եւ ձայնաւոր գրերը, վերջապէս՝ կարդի բերելով կէտաղբութիւնը: Այս երեք աշխատանքը կատարելու համար հրատարակիչը պէտք է կռահում. ներ անէր: Քանի որ, օրինակ, մեր ը եւ՝ գրերի դիմաց վրացերէն այլուրէնը մէկ հատ հ (ր) ունի միայն՝ ամէն անդամ երբ հրատարակիչը պատահէր ի տառով զրած որ եւ է բառի, պէտք է ջանար կռահել, գուշակել նրա բուն նշանակութիւնը եւ ըստ այնմ շ կամ ո գրէր: Թէ ի՞նչ տարբեր արդիւնքների կարելի էր հասնել այս գէպքում՝ լաւապէս ցըց է տալիս լ. օ երգի վերջին երկողը, ուր Սոյաթ-Նովան ասում է.

Սոյաթ-Նովան բաղն գուն իս, —

Կարօտ իմ, բառ իմ ասում:

Բնագրում վրաց գրով անշուշտ զրուած է թէի, որ կարելի է եւ սառու զրադանել եւ բարու: Հանգուցեալ Յ. Թումանեանն առաջար- կում էր ոչ թէ սառու կարդալ, ինչպէս արել էր գ. Հախվերդեանը, այլ սառու որ եւ ճիշտ է. Քանի որ բաղց (սյդուց, պարտէղց) կարելի էր հասնել սառու (պտռուղ) կարօտել եւ ոչ թէ սառու. Եւ յետոյ՝ բարու շատ աւելի լաւ է յանդում նախորդ տուների ուր, ուր, հար, իսր (քուշ) բառերին, քան սառու:

Նոյն կարելի է ասել եւ պակսող գրելի մասին, այստեղ էլ անհրաժեշտ էր կռահում, գուշակութիւն: Այսպէս օրինակ Ժ. Երգի մէջ Սոյաթ-Նովան ասում է. .

Երած խօրւած ման իմ գալի, մէ տիդ չայ տար ու նէսամ. Նկատի ունենալով շետեւ- չը կայ տար ու նէսամ. Նկատի ունենալով շետեւ- չը կարդու տողի վերջում դրուած, փարդու եւ եալ երկու տողի վերջում դրուած, փարդու եւ դարդու բառերը՝ կարելի էր կռահել, որ սարու բառին մի ո է պակասում: Գ. Հախվերդեանը չի կռահել պակասը եւ սարու բառը տպագրել է նոտր գրով իրը իրան անծանօթ մի բառ. Յովհ. Թումանեանն առաջարկում էր սարու, ը կարդալ սարդու, որ շատ լաւ յանդում է սփարդու ու դարդու բառերին եւ խօսքին տալիս է լրիւ իմաստ:

Նոյն կռահումն անհրաժեշտ էր եւ կիտա- շրութիւնը կարգաւորելու ժամանակ, քանի որ կիտագրութիւնն է նպաստում իմաստի ճիշտ ըմբունումն: Այս կարդի օրինակներ կարելի եւ տեսնել գիտողութիւններիս վերջին բաժնի մէջ:

Նախանցեալ տարի առիթ ունեցայ կաղ- մելու Սոյաթ-Նովայի համարարբառը: Աշխա-

տանքիս ընթացքին նկատեցի, որ գ. Հախվեր- դեանի հրատարակութեան մէջ բաւական թուով տառադարձութեան, կիտադրութեան եւ բա- ռագրութեան սխալներ կան, որ արժանի են ուշագրութեան: Դժուար է ասել թէ ով է այդ սխալների պատասխանատուն. — Գ. Հախվեր- դեանը թէ Մ. Էմինը: Ով էլ լինի պատասխա- նատուն անհրաժեշտ է, որ Սոյաթ-Նովայի երգերի երրորդ հրատարակութեան ժամանակ խուսափեն այդ թերիսներից եւ հանրութեան ձեռքբար տան անթերի մի գործ: Մեծատաղանդ աշուղի երկերի ապագայ հրատարակութեանը ապաստած լինելու դիտումով՝ ես յարմար տեսայ դիտողութիւններս գրի առնել եւ հաղորդել բանասէւներին, շատ տեղ մեկնելով բնագրի իմաստը:

Ա. Նոյն բառի տարբեր զրութիւններ:

Գ. Հախվերդեանի հրատարակութեան մէջ մենք շատ անդամ հանդիպում ենք նոյն բառի տարբեր գրութեան: Մեղ թուում է, որ այս կարդի սխալների մէծ մասն սրդիւնք են հոգե- կան մի որոշ կացութեան: Գ. Հախվերդեանը բնիկ թիֆլիսցի էր եւ հմուտ էր իր մայրենի բարբառին. նա գիտէր նաև գրաբար լեզուն: Սոյաթ-Նովայի երգերը գրուած են թիֆ- լիսի բարբառով եւ հրատարակիչն աշխատել է լիս առաջարկութեանը տառադանել հիմքու հունական աշխատանքի մէջ հաւատար- բարբառի հնչումը տառադանել հաւատար- բարբառի հունական զրաբարն իրար խա- չաձեւել են եւ ձեռքն ակամայ գրել է գրաբարի ուղղագրութեամբ, երբ պէտք էր բարբառի հնչումն արտայայտել:

1. Այսպէս և երգի առաջին տան մէջ կարդում ենք. Նաքաղ մարթ քիզ չ' կանա տէսնի () գուն նըրա պասն իս, քամանչա: Իսկ նոյն տան չորրորդ տողի մէջ կարդում ենք, քիզ իսկնից ծ' կանայ նըրել՝ աշուղի բասն իս, քա- մանչա: Ինչպէս տեսնում էր միեւնոյն բայի միեւնոյն ժամանակն ու գէմքը մի տեղ՝ ունի, մի այլ տեղ՝ շունի:

Այս տարբեր գրութիւնը մենք հանդի- պում ենք մինչեւ իսկ միեւնոյն տողի մէջ, այս- պէս ժ. Երգի բ. տան մէջ. Ես քիզանից չ' իմ իրանա, թէկուզ գուս գայ խաթու խալսդ:

1. Սոյաթ-Նովայի երգերի երրորդ ապագրութիւնը, բնագրական տեսակէտով պարզ արտասարադիւն է. Տեղ Սոյաթ-Նովայի, ապ. Ն. Աղանեանի, թիֆլս 1914:

2. Ա. Խաղել վերջին տան մէջ կալդում ենք. Եփ քաղցը յանդր վիր կօնիս՝ բաց կուլի հիգրդ խաղողն: Խսկ Զ. երգի երրորդ տան մէջ տեսնում ենք. Դահմ արա մէ խօսի միզիդ՝ Բէմուրվաթ, յէն իմ տալի եանա եանա:

Սայաթ-Նովան ընդհանրապէս ՀՀէն է գործ ածում: Այս բառի գրաբար Հային ձեւին մենք հանդիպում ենք երկու անգամ (տես երգ Ա. Փ): Առաջին երգի մէջ գործ երգիչն ինքն է Հային ձեւը գործ ածել, հնազանդելվ իր գեղս գիտական բնազդին: Մեղ յայտնի չեն Սայաթ-Նովայի երգերի բուն եղանակները. բայց գժուար չէ նկատել, որ նշն տողի մէջ Հային թէ ՀՀէն գնելով, մենք շարքին տալիս ենք տարրեր հնչական կշռ: Այսպէս:

Եփ քաղցը Հայինդ վիր կօնիս. Եւ
Եփ քաղցը ՀՀէնդ վիր կօնիս.

Մարքեր տպաւորութիւն են անում. առաջինն աւելի լրութիւն ունի, քան երկրորդը, որ սեղմ է եւ չոր: Կոյն դիտողութիւնը կարելի էր անել եւ երկրորդ օրինակի մասին, որ է. Վարիք բրլբուլ, Հայինիդ մալում (երգ Փ, տուն վերջին):

3. Պարսկերէն լիլ (սոխակ) բառը մի տեղ բուրբւլ, է տպած, մի այլ տեղ բլբուլ, սյսպէս դ երգ, տուն Ա. Գունց օր վուր զարիք բնումուլ մէ տարօվ բաղին կարօտ է. Եւ բնում Դան լցցիլ իմ. Զ. երգ, տուն Բ:

4. Դառնալ, բայի կատարեալ ժամանակը երբեմն շ գրով է, երբեմն ու, բացի վրացին ի գրի անձիշտ գրադարձւթիւնից այստեղ Հաւանօրէն դեր է խաղացել եւ Հախելիքեանի թիֆլիսեցի լինելու հանգամանկը: Վրաստանցի հայերը, վրաց լեզուի ազգեցութեան հիմքու հատեւանքով, հայերէնի և հնչիւնն անխիք արտաքերում են ։ Օվ քիզ խոյեան մըտիկ տայ դառնալ երկու աչկօվ կուր ժԱ երգ, տուն Բ. Եւ գաստամազըդ դառնալ սիմու արքեցում: Խե երգ, տուն Գ:

5. Շոշք բառը, օր թէ Ճառագայթ է նշանակում թէ ստուեր, թէ շող եւ թէ շոր — մի տեղ զրուած է Հոռիսկ, մի այլ տեղ Հոռողի, այսպէս ժԷ երգի վերջին տան մէջ, Շոռիսր աշխարըս բըռնիլ է արէգագի դէմի փար իս. Եւ վեցնց արէգագլն նորի տայ, վունց լուսինը լուս անէ. երգ իմ, տուն Բ:

6. Աստուած բառը մի տեղ չ է, մի տեղ չ ով. Աստուածուն փառք, Քաղկում իս, երգ ժԱ, վերջին տուն. Եւ Աստույու բէրնէմէն

առնիս մըխիթարիչ սուրբ հօքին. Ել գ իթ վերջին տուն:

7. Մեռանիլ բայի ներկան մի տեղ մեռանում է, մի այլ տեղ — միռանում է: Այսպէս երգ Ա. տուն Ա. Մարթ վուր քու խօսկով հետակի, գալ անիլըն ինչըն է շահ. Եւ Օվ չէ տէսի տիսդ է ուզում. օվ տէսնում է դրանում է, ել գ Ա. տ. ւն Բ:

8. Երանի բառի ոամկական երնեկո ձեւը կամ էրնէկո է, կամ էրնէգո. Այսպէս երգ ԽԵ, տուն Բ. Դուն պատվական ջաւահիր իս երնէ քու առնողին ըլի: Խսկ Ա. ել գի դ տան մէջ կարդում ենք. Երնէ ըլի քու տիրուչըն մըտիկ տալէն չ' բէզարի:

9. Բայերի ներկայ ժամ. Եղակի երրորդ գէմբը երբեմն սես, է վերջանում, երբեմն իս: Այսպէս միեւնցն տողի մէջ (երգ ԽԵ, տուն Գ) մենք հանդիպում ենք. Եփ խաղում է վառվում և օցի բէրնի հուլի նըման:

10. Սիրտ բառը տեղ կայ սիրտ, է, աեղ կայ սիրդ. Սէրտա փուրումըս սըքուր է, ալ աշիբը լաց է անում. երգ ԺԳ, տուն Գ: Եւ եարի սէրտ դաղ մի անի. երգ ԽԴ, տուն Ա:

11. Խաթարբանդ, եւ Խաթարբանդ: Միեւնցն բառը կամ մէկ կամ երկու բուլ է. Այսպէս Ա. երգի վերջին սան մէջ, Խաթարբանդը չարա ու չալ դախ, Կօշկ, ամարաթըն գունիս. Եւ Այնիբանդ իս Խաթարբանդ. երգ ԽԴ, էջ 160:

12. Մէջք բառը հանդիպում ենք եւ միչկ, գրութեամբ: Բարակ Դնութ սէյրսն արիր. երգ ԽԴ, էջ 162. Ծո՞ր դ բաղչա ունիս, Դնութ է զամիշ ել գ ԽԵ, տուն Գ:

13. Ճամփա եւ Ճանփա. Ճամփա իմ եարի ճամփան կանգնած իմ. երգ ԺԱ, վերջին տուն. Ենդու համա քու տէսնողին իր ճամփէն կու մալըրի. երգ Ա. տուն Բ:

14. Բարկ եւ բարկ. Բարկ երէսիդ իս անում. Ել գ Թ, տուն Գ. Բարկ երէրդ՝ կըլ ակ նընգած սկու նշման ջիպանում է. երգ Ա. տուն Բ:

15. Սուրբ եւ սուրբ. Սո՞րէ զինի անպական, երգ ԺԱ, տուն Գ. Եւ Օվ օր ինձ շնից գիվանա Սո՞րէ կալապիտէն իիլանայ, երգ ԽԶ, տուն Գ:

16. Ջալաթ եւ Ջալաթ. Այս բառը երիք երգի մէջ է գործածուած. ԺԳ երգի մէջ մէկ լով. ըսպանէլու ջալաթ չկայ*: Խսկ Ա. եւ ԽԳ:

* Իրականին մէջ սակայն երեք տեղ ալ զրուած է կրկին աշով ըսպանէլու ջալաթ չկայ, էջ 85: Խմբ, Հանդ, Ամս.:

երդերի մէջ երկու լով. եկ մօրթէ չալլաթն դւն իս (ԱԸ). ջալլաթի ջազա իս, աղիղ (ԽԳ):

17. Հինգու եւ Հընդու. Հինգ (Հնդկաստան) բառի սեռական հոլովք չորս երդի մէջ է հանդիպում. երկու տեղ Հինգու ձեւով. երկու տեղ — Հնդու ձեւով.

Հինգու միշէմն դուս էկած. Ի՞Զ:

Հինգու դիարէմն եկած. Լ:

Եւ՝ Հընդու էկած ղարանփիլն. ԼԹ:

Հնդու էկած ղալամքար իս ԽԴ:

18. Մանուշակ եւ մանիշակ. այս բառը պատահում է ութ անգամ. Հինգ տեղ՝ «մանիշակ» ձեւով. մանիշակով լիքն սարիր. ԺԴ. (տես նաեւ երդ ԽԱ, ԽԲ, ԼՅ, ԽԴ). Իսկ երեք տեղ՝ «մանուշակ», ձեւով. մանուշակ բացարած հովին. Զ (տես նաեւ ԺԶ, ԺԸ).

19. Ա-ով վերջացող օտար բառերի, մինչեւ իսկ յատուկ անունների վերջում երբեմն է դնում, երբեմն — ոչ։ Այսպէս օրինակ 15 դ դիտողութեանու մէջ՝ «դիւնան» բառը, «որ» չունի, համեմատեցէք ԻԲ երդի Բ տան Բ տողի հետ, ուր Լողմա յատուկ անունը տպուած է յով. Վի կէն ոյ Լողմայ հէքիմն՝ բալքամ դարդիս անէ չարա. կամ ԽԳ երդի չորրորդ տան մի տողի հետ, ուր օտար բազա բառը յով է զրուած։ Գուն ինձնից շուտով մի թըռչե շաւրդան, բազայ իս, աղիղ։

20. Այս կարգի թերիներից են եւ պարզ տառախանները, որ բարեբախտաբար շատ չեն։ Այսպէն՝ ԻԵ երդի Բ տան մէջ, ով կու գլթնէ՝ ախ չէ քաշի, վայ կու կօրցնողին ըլի. որ պէտք է ուղղել. «վայ ուր կորցնողին ըլի»։ Եւ ԱՅ երդի Գ տան մէջ՝ Աստանէն մի դամբէ է որի Աթափ շաթը վասալը վասալը, որ պէտք է ուղղել. «մի դամբէ վասալը, որ պէտք է ուղղել. մի դամբէ է որի, այսինքն մի ուռկան է զցել, մի որոգայթ է լարել. Պարզ տառախան պէտք է համարել եւ սերկիրո, զրութիւնը և երդի Գ տան մէջ, որ բարբառական արտարերութեամբ պէտք է լինի «երդիրո», ինչպէս նկատում է պէտք է լինի «երդիրո», ինչպէս նկատում է պէտք է լինի «երդիրո», ինչպէս նկատում է պէտք է լինի «երդիրո»։ Երդին կցած ծանաեւ հրառարակիչն ինքը Թ. երդին կցած ծանաեւ մէջ նյոթութեան մէջ (էջ 71):

Բ. Բառերի եւ մասնիկների կից եւ բաժան գրութիւններ։

Գ. Հախվերդեանն իր հրառարակութեան մէջ մի եւ նյոթ բառերն ու մասնիկները երբեմն է տպագրում, երբեմն՝ բաժան, նոր տպակից է տպագրում, բարձրահայակ եւ գեղագեց մարդուն անուաններվ «գն սյուն նոճի, սր ու ռօն պէտք է տպագրել «սալը ու չինար»։

Է նյոն ձեւ. վ արտայայտել։ Ստորեւ մենք բե։ բում ենք այս կարգի բոլոր թերիները։ 1. ԻԴ երդի Բ տան մէջ կարդում ենք. Պամկօրէնի մէջ ղանդու շաքարի նմաննու։ Պէտք է ուղղել՝ «ղանդու շաքարի նմաննու։ Ռամկօրէնի մէջ այս տեսակ բառական զրյադերի երկրորդ բառն է, որ հոլովում է սովորաբար. այսպէս ասում են՝ «որ հոլովում է սովորաբար. այսպէս ասում են՝ «լաւ ու վատից», «տուն ու տեղով», «խէր ու շառի», եւ այլն։

2. Քաղաք տիղ եւ քաղաքտիղ. ԻԲ երդի վերջն տան մէջ կարդում ենք. Գիղումն՝ մէլիք, տանուտիր, քաղաքտիղն՝ Սուլթան խան իս. իսկ ԻԳ երդի չորրորդ տան մէջ հանդիպում ենք. Թէ վուր քաղաք տիղ հանդիբիս՝ կու քանդիս, վար չիս անի. Քանի որ հայերէն քաղաքտիղ տառ չկայ՝ պարզ է, որ պէտք է «քաղաք» եւ բառ չկայ՝ անջատ տպագրել։ Ռամկօրէնի մէջ կայ «տիղ», անջատ տպագրել։ «քաղաքտիղ», «գիղ տեղ», «բացատրութիւն» «քաղաք տեղ», «գիղ տեղ», «սար տեղ», «գիղ տեղ», եւ այլն։

3. Զարղալամքար եւ զար ղալամքար. ԻԶ երդի Գ տան մէջ կարդում ենք. Մէ բիոն զար ղալամքարի, տիղ ունի վանց օր մագաղաթ. մի այլ տեղ (երդ Լ, Ա տուն) հանդիպում ենք. Հինգու դիարեմն էկած զարղալամքար իս, զինդու գիտարեմն էկած զարղալամքար իս, գովելի. Պէտք է անջատ տպագրել այդ երկու գովելի. Քանի որ կայ լու, որ զարբար է (ոսկով բառը, քանի որ կայ լու, որ զարբար է, այսինքն բանուած), կայ լու, որ զարմաքար է, այսինքն տեղը զար է, իսկ նախշերը տպածոյ։

4. Սալբու չինար եւ Սալբ ու չինսոր. Լ երդի Դ տան մէջ հանդիպում ենք. Աշխարիս շւաք իս անում՝ սալբ ու չինար իս, գովելի. իսկ ԺԴ երդի Բ տան մէջ կարդում ենք. Սալբու չինար, էտ ինչ արիր։

Սալբ կամ Սալբին եւ չինսոր երկու տարրեր ծառեր են. սալբը պաւսկերէն յան նոճին է, սորդէ, իսկ չինսորը պարսկ. շնարակ սոսին է, platane. բայց երկուսն էլ սլացիկ բուն ունին եւ թանձր ստուեր։ Ռամկական երդը սիրածին ինչպէս օրինակ այն շատ տարածուած ծառին, ինչպէս օրինակ այն շատ տարածուած երդին մէջ, որ ասում է. «բոյդ բարձր սալբ ու չինար»։ Այսն համեմատութիւնը սիրում են եւ պարսկեները, բարձրահայակ եւ գեղագեց մարդուն անուաններվ «գն սյուն նոճի, սր ու ռօն պէտք է տպագրել «սալը ու չինար»։

5. Զար ու զարբար եւ զարուղարբար. ԽԱ երդի Գ տան մէջ կարդում ենք. Զարուղարբարէ դրօշա՝ ման իս գալի ալաֆ պէս. իսկ

Ներգի Ա տան մէջ տեսնում ենք. Զորյար ու զար իս, գովելի:

Զարը սոկեդոյն թանկարժէք կերպաս է, որից շնում են շուրջառ եւ խաչվառ. նրա անկար կտորը գործ են ածում իր դիազարդ, ծածկելով դադաղը կամ հոգեհանգստի ժամանակ՝ ձգել Հանգստեան սեղանի վրայ: Երբեմն այդ զարը սոկով բանուած է լինում, այդ դէպքում նա զարբար զար է: Պարսկերէն զարբաֆ ներք նշանակում է ոսկրվ բանուած: Բանաստեղծն ասում է. «ով դու զարից եւ զարբարից պատրաստած դրօշակ, ման ես գալիս դուշի պէս», այսինքն հանդիսաւոր ընթացքով: Այդ երկու բառերը պէտք է անշատ տպագրուին:

6. Մասնէմաս թէ մասնէ մաս: Խթ երգի վերջին տան մէջ կարդում ենք. Թաք դուն բախչէն գաս՝ անիս մասնէ մաս քու Սայաթ-Նովուն. Պէտք է տպագրել միացած, ինչպէս գրում ենք՝ տնտեսուն ման գալ, օրէցօր լաւաշ, սարէսար, քարէքար ընկնել եւ այլն:

7. Իխտիարիւ թէ իխտիար իս, ԽԴ երգի մջ (տես էջ 160) կարդում ենք.

Նազ իս անում իխտիարիս
Հիդ աշխարիս բարէքար իս
Հնդու էկած ղալամքար իս:

Պէտք է տպագրել «իխտիար իս», այդ պէս է պահանջում նախ շեշտը, որ հետեւեալ երկու տողերի մէջ վերջնթեր ա-ի վրան է. բարեբար իս, զալամքար իս: Յետոյ՝ միեւնոյն ճանապարհութեան նշանակում է ծերունի, աշեւոր, իսկ պարսկերէն՝ կամք, ընտրութիւն: Եթէ պահէնք տպագրած ձեւը՝ «նազ իս անում իխտիարիս», տողը, «իխտիար» բառի թբքական առումով, պիտի նշանակէր՝ «նազ ես անում ծերունուսու», որ թէեւ անիմաստ չէ իրը խօսք, բայց անիմաստ է իրը Սայաթ-Նովայի ասած խօսք: Երգելը ծերունի չէր, որ այդպիսի մի տող գրէր: Մինչեւ եթէ «իխտիար», բառն առնենք կամք, լիազօր մաքով, այն ժամանակ վերի տողը այն իմաստը կը ստանայ, թէ «Նազ ես անում», կամքը քոնն է», այսպիսի տող կարող էր գրել Սայաթ-Նովան, որ անփոխադարձ սիրոյ երգիչ էր: Պէտք է ուրեմն տողն այսպէս տպել՝ «Նազ իս անում, իխտիար իս»:

8. Դամւ գաւրան թէ գամ ու գաւրան, ԽԴ երգի մէջ (էջ 161) կարդում ենք. Դամուղան իս համաշա: Պէտք է անշատ տպագրել այդ երկու բառերը, գամ եւ գաւրան պարսկերէն նշանակում է յնծութիւն, ուրախ ժամանց,

ինչպէս ուղիղ զիտում եւ ուղիղ գրում է Գ. Հախվերդեանն իր ծանօթութեան մէջ (տես էջ 166):

9. Թէ գուղ եւ թէ գուղ, Խթ երգի վերջին տան մէջ կարդում ենք. Սայաթ-Նովայի քու եարն է թէ գուղ մասնէ մաս անին: Խթ ի երգի առաջին տան մէջ տեսնում ենք. թէ գուղ քու քաշը մալքրիտ տան բրօի բրոյի: Պէտք է գրել ու տպել միացած, ինչպէս գրում ենք «թէ շէ», — «ապա թէ ոչ», իմաստով:

10. Ծառայիս թէ ծառայ իս. ԺԶ երգի առաջին տան մէջ կարդում ենք. Զենդ քաղցր ունիս՝ լամզով կու խօսիս: Կա պահէ գիդ, ու մի օր ծառայիս, գողալ:

Ո՞ր բառի հետէ մեր գործն այս հատուածի երկրորդ տողի մէջ. «ծառայել», թէ «ծառայ լինել»: Տպածի ձեւին նայելով՝ պէտք է որ «ծառայել», բայց լինի: Բայց այդ ձեւով տողի վերջին մասը շիշտական աններգաշնակութիւն ունի նոյն տան չըրբորդ տողի հետ, որ կարդում ենք. «փոան գտանէն էկած խարա իս, զ զալ Շիշտական այս թերին վերացած կը լինի, և թէ երկրորդ տողին այս ձեւը տանք. «Կա պահէ քիզ, ու մի օր ծառայ իս, գողալ:

Բանաստեղծի միտքն այն չէ, թէ «գողալ» թող նա քեզ պահի, ում որ ծառայես, ում ծառայութիւն անես», այլ այն է, թէ «թող նա պահի քեզ, գողալ, ում որ ծառան ես», — սյսինքն Աստուած պահի քիզ, գողալ: «Կատենք նաեւ որ «ծառայել», բառը «սպասաւոր», իմաստով եւ «ծառայել», բայց թիֆլիսի բարբառում գործածական չէ. Դրա փոխարէն գործածական է պարսկերէն «նօքար», կամ վրացերէն «րիճ», (տղայ) բառերը: «Ծառայ», բառը զործ է ածուում կրօնաբարեկաշտական ասութեանց մէջ. օրինակ ասում են. «ծառայ եմ նրա սուրբ զորքին», երբ խօսք է լինում որ եւ է սուրբի մասին:

11. Քարափէ թէ քարափ է, ը երգի չըրբորդ տան մէջ կարդում ենք. Քունիաթս աւազ չիմանաս, քարափէ քարուկրէն է:

Այս ձեւով տպագրած՝ «քարափէ», բառն իմաստ չունի եւ ամրող տողն անիմաստ է զարձնում, տպած ձեւով այն միտքն է ստաց ուում թէ «չկարծես. որ հիմքս աւազ է. ոչ. քարափէ քարուկրէն է», ինչ որ իմաստ չունի: Մինչ գեռ եթէ անջատ տպագրենք. «բունիաթս աւազ չիմանաս, քարափ է, քարուկրէն է», տողն իմաստալից կը դառնայ եւ կը նշանակէ. «Չկարծես, որ հիմքս աւազ է. ոչ. քարափ է

եւ քարուկրից է՝ թիֆլիսի բարբառում “քարափի”, — նշանակում է ժայռ. այսպէս՝ թիֆլիսի հայաբնակ թաղերից մէկը, որ չին բերդի ժայռերի վրայ է շինուած, կոչուում է “քարափի թաղ”, նրանց եկեղեցին — “քարափի Ա. Գէորգի”, իմ մանկութեան ժամանակ մի նշանաւոր կոփամարտիկ կար թիֆլիսի Հաւլաբար թաղում, որի աւել անունը “քարափ քանդող”, եր. թիֆլիսի չին բերդն ու Մետելիի ամրոցը շինուած են սեպացած ժայռերի վրայ եւ քարուկրով: Հայրենի քաղաքի այս պատկերներից եւ Աւետարանի առակից ներշնչուելով է, որ Սայաթ-Նովան ստեղծել է պատկերը թէ՝ “Հիմքս աւազ չիմանաս, այլ ժայռ է եւ քարուկրի”:

12. Կմանիս թէ նման իս. Ի՞ր երդի և տան մէջ կարդում ենք. Ես քու զիմեթք չիմ գիրի ջաւահիր քարին նմանիս. Տեսնողին Մէջը լում կու շինիս՝ Լէյլի՛ դիդարի նման իս:

Թէ շեշտը եւ թէ իմաստը պահանջում են, որ տպագրուի ոչ թէ “նմանիս”, այլ՝ “նման իս”, Որքան գիտենք թիֆլիսի բարբառի մէջ չկայ “նմանիւ”, բայց. Եւ յետոյ միտքն այն չէ, թէ “ջաւահիր քարի նմանես”, այլ — “նման և ջաւահիր քարի”:

13. Ծաղտու թէ շաղ տու. ԺԱ երդի վերջին տան մէջ կարդում ենք. Ալէ, շաղտու վուտիդ տակն: Բայը “շաղ տաղ” է, ուստի պէտք է անջատ տպել, ինչպէս գրում ենք ձեռք տալ քաշ տալ, շուռ տալ եւ այլն: Նոյն բայը ճիշտ ձեռով տպաւծ է և երդի վերջին տան մէջ. Եփ մեռանիմ, շաղ տու վրէս՝ դաստամազի թէլի շադէս:

14. Ուանգէ ուանգ թէ ուանգ էռանգ. Են երդի և տան մէջ կարդում ենք. պատկիրքդ շալամով քաշած, թահրդ ուանգէ ուանգ իս անում: Կոյն հիմքով, որ պարզեցինք Ե-դ օրինակի մէջ, այստեղ էլ պէտք է գրել միացած. “ուանգ էռանգ իս անում”, որ նշանակում է տարբեր երանգներ ես տալիս տեսքիդ:

15. Մարքարիտէ թէ մարքարիս է. Ալ երդի զ. տան մէջ բանաստեղծն ասում է. Աւետարանի խօսկիրն՝ մարքարիտէ կարքն սիրուն. Մի ածի խո-զի առջեւ առջեւ լալ ու գովար. Սայաթ-Նովա: Այս հատուածի առաջին տողն անիմստ է, քանի որ բայ չոնի: Եթէ “մարքարիտէ”, ու պագրենք անջատ, այն ժամանակ տողը որոշ իմաստ կ'ըստանայ. “Աւետարանի խօսկիրն մարքարիտէ՝ կարքն սիրուն”, այսինքն՝ Աւետարանի քարիտէ՝ կարքն սիրուն, կարգով շարած մարգարիտ են:

16. Աչկիլուս թէ աչկի լուս: Այս արտայայտութիւնը Սայաթ-Նովան գործ է ածել երեք երգի մէջ. (Ե. Զ. Եւ Խ.): Այս երգերից վերջնի մէջ երկու բառերն անջատ են տպուած, իսկ առաջին երկուսի մէջ միացած: “Աչքիլոյս”, արտայայտութիւնն արեւելեան ասութիւն է եւ փոխաբերական իմաստով նշանակում է. “սիրելի, թանկագին”, (համեմատ. պասկ. օջած աչքիլի, թանկագին): Ընդունելով, որ բառական առումով պէտք է անջատ գրել, իսկ փոխաբական իմաստով առած ժամանակ — միացած՝ մենք առաջարկում ենք Խօջ երգի մէջ եւս միացած տպագրել, բացի մի դէպքից: Այդ երգի մէջ “աչկիլուս”ը գործածուած է չորս տեղ: Առաջին տան մէջ կարդում ենք. “աչկի լուս քուր իմ ասին”, այսինքն՝ “ով աչքիլոյս”, քոյր եմ անուանել, բայ գեղ քոյր եմ անուանել, ուստի պէտք է տպագրել միացած “աչկիլուս”, եւ ստորակէտով բաժնել, իրը կոչական անուն:

Երկրորդ տան մէջ կարդում ենք.

“Աչկի լուս ուր իմ ասի:

Զուր չիմ ասի, զուր չիմ ասի,”

Իմաստն այն է թէ՝ “Հապա ինչո՞ւ համար եմ աչքիլոյս ասել. զուր չիմ ասել”, ուստի պէտք է միացած գրել եւ “ուր, ի վրայ հարցական նշան գնել. — “Աչկիլուս ուր իմ ասի, : Նոյն իմաստն ունին այդ խօսքերը եւ վերջին տան մէջ, ուստի պէտք է միացած տպագրել:

2որրորդ տան մէջ կարդում ենք.

“Վարդի երեսն սիւանայ

Աչկի լուս կուր իմ ասի

Զուր չիմ ասի . . .”

Այստեղ կարելի է այդ երկու բառն անջատ տպագրել եւ այն մտքով հասկանալ թէ՝ “վատի (վատ մարդու) աչքի լոյսը կոյր եմ ասել”, այսինքն՝ ասել եմ վատ մարդու աչքը կուրանայ, որ ուամկական անէծքի սովորական ձեւ է եւ Սայաթ-Նովան գործ է ածում թէ սոյն Խօջ երգի մէջ ասելով՝ “ինչ աչկ քիլ խօյեան մոհիկ տայ, ջառմ եար, կուր իմ ասի”, եւ թէ այլուր, օրինակ ԺԱ երդի Բ տան մէջ, “ով քիլ խայեան մոհիկ տայ՝ դառնայ երկու աչկով կուր”, “Նշատենք նաեւ, որ դ տան մէջ “Զուր”, բառը պարզ տառասիալ է եւ պէտք է լինի “Ղուր”, ինչպէս Բ տան կրկնակի մէջ:

Ն. Աշբաւեան

(Ըստ Հայութիւն)

